**Ուշադրություն, վիճակախաղի ժամկետը երկարաձգվել է, նոր ժամկետի մասին Կազմակերպիչը լրացուցիչ կտեղեկացնի, այդ ընթացքում բոլոր Սմարթ հաշիվ բացած նոր հաճախորդները կմասնակցեն վիճակախաղին:**

# YEREVANRIDE ՀԱՎԵԼՎԱԾԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Գովազդային վիճակախաղը (այսուհետ՝ վիճակախաղ) անցկացվում է «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից:

2. Վիճակախաղը ներքոգրյալ պայմանների կատարման պարագայում դրա մասնակիցներին հնարավորություն է ընձեռում ստանալու YerevanRide հեծանվային հավելվածի տարեկան անդամակցություն՝ երեք հատ:

3. Վիճակախաղին կարող են մասնակցել Ամերիաբանկի հաճախորդ չհանդիսացող անձինք, ովքեր 2020 թվականի մարտի 3-ից մինչև մարտի 24-ը ներառյալ հեռահար եղանակով կբացեն ՍՄԱՐԹ հաշիվ Ամերիաբանկում՝ լրացնելով smart.ameriabank.am կայքէջում տեղադրված օնլայն հայտը: Ուշադրություն, վիճակախաղի ժամկետը երկարաձգվել է, նոր ժամկետի մասին Կազմակերպիչը լրացուցիչ կտեղեկացնի, այդ ընթացքում բոլոր Սմարթ հաշիվ բացած նոր հաճախորդները կմասնակցեն վիճակախաղին:

4. Վիճակախաղի բոլոր մասնակիցներին մինչև ս.թ. մարտի 26-ը ներառյալ կտրամադրվեն հերթական համարներ էլ. փոստին ուղարկվող հաղորդագրության միջոցով: Ուշադրություն, վիճակախաղի ժամկետը երկարաձգվել է, նոր ժամկետի մասին Կազմակերպիչը լրացուցիչ կտեղեկացնի, այդ ընթացքում բոլոր Սմարթ հաշիվ բացած նոր հաճախորդները կմասնակցեն վիճակախաղին:

5. Հաճախորդի՝ Վիճակախաղին մասնակցելու իրավունքը ծագում է սույն պայմաններին համապատասխան հերթական համար ստանալուց հետո:

6. Վիճակախաղի ընթացքում հաղթող կճանաչվեն այն մասնակիցները, ում համարները պատահականորեն կընտրվեն Pretty Random հավելվածի միջոցով:

7. Վիճակախաղի արդյունքում հաղթող ճանաչված համարները կհրապարակվեն Ամերիաբանկի կայքում և ֆեյսբուքյան էջում մինչև ս.թ. մարտի 27-ի ժամը 23:59: Ուշադրություն, վիճակախաղի ժամկետը երկարաձգվել է, նոր ժամկետի մասին Կազմակերպիչը լրացուցիչ կտեղեկացնի, այդ ընթացքում բոլոր Սմարթ հաշիվ բացած նոր հաճախորդները կմասնակցեն վիճակախաղին:

8. Հաղթող հաճախորդների հետ Բանկի աշխատակիցը կապ կհաստատի Բանկում գրանցված հեռախոսահամարով կամ էլեկտրոնային փոստի հասցեով:

9. Մրցանակը ստանալու համար հաղթող ճանաչված հաճախորդները պետք է YerevanRide հավելվածի պրոմո կոդերի բաժնում մուտքագրեն իրենց Բանկի աշխատակցի կողմից տրամադրված հատուկ պրոմո կոդերը: Հաղթող մասնակիցները փաթեթն ակտիվացնելու համար պետք է կցեն իրենց Ամերիաբանկի քարտը YerevanRide հավելվածում, որի ընթացքում քարտային հաշվից կգանձվի 11 ՀՀ դրամ, որը հետագայում հետ կփոխանցվի հաճախորդի հաշվին:

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել՝ 010 56 11 11, ameriabank.am